ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **12/03/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Հմայակ Խաչատրյանը, Յուրա Մանուկյանը, Արթուր Մելոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր՝ Գարիկ Բաղայանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի 2025 թվականի մարտի 12-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ գյուղում փողոցները անվանակոչելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի աագանու 2025 թվականի փետրվարի 11-ի N 12 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին .

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին.

7) Համայնքային ենթակայության գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մազի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

9) Վարձակալության պայմանագիրը լուծելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N151 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «5112» (Պարտադիր վճարներ) «5500,0» թիվը փոխարինել «10500.0» թվով:

2) Բաժին 2 խումբ 5 դաս 1 (Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված

«4841» (Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում) «0,0» թիվը փոխարինել «5000,0» թվով:
3) Բաժին 5 խումբ 6 դաս 1 (Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված «4239» (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) «0,0» թիվը փոխարինել «1500.0» թվով:
4) Բաժին 8 խումբ 4 դաս 2 (Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ) հոդված «4819» (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) «1500,0» թիվը փոխարինել «1700.0» թվով:
5) Բաժին 11 խումբ 1 դաս 1 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «229515,5» թիվը փոխարինել «217815,5» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 77 –րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածներ N 1- 59 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 -ի

թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի որոշման քաղվածքները՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ ձախակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 13-րդ փողոց :

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 13-րդ փողոցի ձախակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 13-րդ փողոց, 1-ին փակուղի:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 13-րդ փողոցի աջակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 13-րդ փողոց, 2-րդ փակուղի:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ աջակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 14-րդ փողոց:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ ձախակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 15-րդ փողոց:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ աջակողմյան հատվածում գտնվող ճանապարհը անվանակոչել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք գյուղ Մարմարիկ 16-րդ փողոց՝ համաձայն հավելվածի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի « «ԾԱՂԿԱՁՈՐ ՍԵՐՎԻՍ» համայնքային փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին.» թիվ 12 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) նախաբանում գրված « «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի զ) ենթակետով և 25-րդ հոդվածի 2-րդ

կետով.» բառերը հանել
2) նախաբանում գրված ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով» բառերից հետո լրացնել « Բաժնետիրական ընկերությունների մասին » օրեքի 27-րդ հոդվածը» և « Քաղաքացիական օրենսրգրքի 67-րդ հոդվածի, 2-րդ մասի, 1-ին կետի » բառերով;
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի, 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Որպես նվիրատվություն ընդունել՝ Հայաստանի Հանարապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հաանրապետության ներքին գործերի նախարարությանն ամրացված (հաշվեկշռում հաշվառված), Զիլ 130ԱԲ40 մակնիշի տրանսպորտային միջոցը (պետհամարանիշը՝ 827 VV 01, թողարկման տարեթիվը՝ 1987թ. տեխնիկական անձնագրի համարը՝ SB832886, հենասարքի համարը՝ 2671985, արժեքը՝ 490800 ՀՀ դրամ):
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել նվիրատվության պայմանագիրի կնքման գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

1. Հաստատել՝
1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Գրիգոր Երիցյանի գրությունը

Համայնքային ենթակայության, Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին փողոց 29 հասցեում գտնվող մշակույթի տան շենքի 2-րդ հարկի տարածքը 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությանը՝ երիտասարդական կենտրոն հիրմնադրելու համար:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել « Ծաղկաձոր քաղաքի արվեստի դպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Լուծել «Ծաղկաձոր Սերվիս » փակ բաժնետիրական ընկերության հետ 2005 թվականի օգոստոսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրներ հասցեում գտնվող 0.16 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը:
2. Սահմանել,որ պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N151 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 151 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37)*

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղդասարյանը